ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--------» ---------- 2022թ. **N ---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ. 69-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2022թ.
N ---------- Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2021 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2021թվականի տարեկան զուտ շահույթ	Շահութաբաժնի հաշվարկման բազա	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Միասնական բազմանպատակային հիմնադրամ	Վնասների նվազեցում
1	«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ	652283.0	660411.0	0	0.0	0	652283.0
2	«Լ. Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ	1433.0	1433.0	573.2			859.8
3	«Քաղաքային Էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	832.0	832.0	332.8			499.2
4	«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	221.0	221.0	88.4		132.6	
5	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	1182.9	1187.3	0.0			1182.9
6	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	4071.0	4071.0	1628.4		2442.6	
7	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	609.0	7722.0	3088.8			
8	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ	34494.0	34494.0	13797.6		19623.7	
9	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	5193.0	5193.0	2077.2		3115.8	
10	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	1060.0	1060.0	424.0		636.0	
11	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	978.0	1010.0	404.0		574.0	
12	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	6059.0	12853.0	5141.2		917.8	
13	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ	35277.7	35277.7	14111.1		21166.6	
14	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	343.6	343.6	137.4		206.2	
15	«Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ	2179.0	2179.0	871.6		1307.4	
16	«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	1176.0	1176.0	470.4		705.6	
17	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	58.5	58.5	23.4		35.1	
18	«Սարի թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	866.5	866.5	346.6		519.9	
19	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	14131.5	14134.9	5654.0		8477.5	
20	«Նոր Արեշ» պոլիկլինիկա» ՓԲԸ	1855.7	1855.7	742.3		1113.4	
21	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	1485.0	1485.0	594.0		891.0	
22	«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	580.6	718.6	287.4		293.2	
23	«Երևանտրանս» ՓԲԸ	30091.0	30091.0	12036.4		18054.6	
24	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	72504.7	86844.7	34737.9	37766.8		
25	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	11860.0	11860.0	4744.0		7116.0	
26	«Քաղաքաշինություն» ՓԲԸ	5286.5	5286.5	2114.6		3171.9	
27	«Երքաղլույս» ՓԲԸ	155673.0	155673.0	62269.2		93403.8	
28	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	25847.5	25847.5	10339.0		15508.5	
29	«Ձևավորում» ՓԲԸ	92.7	92.7	37.1		55.6	
30	«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ	-4125.0	100986.0	0.0			
31	«Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՓԲԸ	208.7	208.7	83.5	125.2		
32	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	162.7	162.7	65.1		97.6	
33	«Անխափան վերելակ» ՓԲԸ	6.0	6.0	2.4		3.6	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1063977.8**	**1205641.6**	**177222.9**	**37892.0**	**199570.0**	**654824.9**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու՝ 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման (խմբագրված 23.12.2020թ. հ.312-Ա որոշմամբ) կատարմամբ (այսուհետ՝ Որոշում):

Համայնքիսեփականությունհանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների՝ 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի հաշվարկման բազաները և վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքները, շահութաբաժինների, զուտշահույթիբաշխմանուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 48 ընկերություններից 2021 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 36 ընկերություն (որից 3 հանձնված են հավատարմագրային կառավարման), որոնց զուտ շահույթը կազմել է 2.730.937,7 հազ. դրամ, իսկ առանց հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների՝ 2.374.791,2 հազ. դրամ:

Շահութաբաժնի հաշվարկման բազան, հաշվի առնելով Երևան քաղաքի ավագանու՝ 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.312-Ա որոշմամբ կատարված լրացումները և փոփոխությունները, կազմում է 1.205.641,6 հազ. դրամ, սակայն շահութաբաժին վճարող հանդիսացող կազմակերպությունները թվով 30-ն են:

Շահութաբաժնի հաշվարկման բազա է ընդունվել 443057,3 հազ. դրամը, քանի որ «Նորք Մարաշ» ԲԿ, «Թիվ 4 պոլիկլինիկա» և «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ների գծով շահութաբաժին չի հաշվարկվում, քանի որ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի հիմքով առկա են շահութաբաժնի վճարման

սահմանափակումներ (զուտ ակտիվների արժեքը պակաս է կամ կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով):

Այսպիսով, շահութաբաժինների հաշվարկման բազան կազմում է 443057,3 հազ. դրամ, որից վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կկազմի 177.222,9 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ